ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՄԱՅԻ

1. Թեմայի վերնագիրը. «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը»

2. Ծածկագիրը. *01-SCI-2017*

3. Թեմայի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. *№ ՏhSU 01-SCI-2017, «01» մարտի 2017 թ.*

4. Հաշվետու ժամանակահատվածը. *«01» III. 2018 թ.-ից «31» V. 2018 թ.*

5. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է թեման. *Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան*

6. Թեմայի ղեկավարի
   ազգանունը, անունը, հայրանունը. *Մարտիրոսյան Լ. Մ.*
   հեռախոսը. *055 77 03 99*
   էլեկտրոնային փոստի հասցեն. mlevon2003@mail.ru

7. Հաշվետու ժամանակահատվածում թեմայի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները. 900 000 *ՀՀ դրամ*

8. Թեմայի ղեկավարի ստորագրությունը. _____

«10» հունիսի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Շիրակի պետական համալսարանի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնում իրականացվող «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» գիտահետազոտական թեմայի աշխատանքները հինգերորդ եռամսյակում սկսվել են 2018թ. մարտի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում, աշխատանքային խմբի կողմից կատարվել է լանդշաֆտների գեղագիտական գնահատման վերաբերյալ գրականության ուսումնասիրություն, ինչպես նաև լանդշաֆտների գնահատման մեթոդիկայի և դաշտային աշխատանքների պլանի մշակում:

Քանի որ նշված գիտական ուղղությունը չի ունեցել մեծ տարածում, որոշվել է կատարել որոշակի հետազոտական աշխատանք լանդշաֆտների գեղագիտական գնահատման պատմության և տվյալ գիտական ուղղության զարգացման մասին, որի նպատակն է այս թեմայի վերաբերյալ նյութերի հրատարակումը:

Պետք է ասել, որ լանդշաֆտների գեղագիտական հատկությունների ուսումնասիրությունը սկսվել է դեռևս անտիկ դարաշրջանում: Սակայն այս ուղության գիտական հիմքը դրվել է միայն 19-րդ դարի կեսերին՝ Ա. Հումբոլտի կողմից, ով առաջինն էր, որ փորձեց կապել գիտությունը և արվեստը՝ ներմուծելով լանդշաֆտների պատկերումը աշխարհագրության մեջ [1]:

Ա. Հումբոլտից հետո, լանդշաֆտների գեղագիտական գնահատման գործում մեծ աշխատանք է իրականացրել գերմանացի աշխարհագրագետ Ա. Գետները, որն էլ իրավացիորեն համարվում է գիտական այս ուղղության «հայրը»: Նա առաջինն էր, որ օգտագործեց «Գեղագիտական աշխարհագրություն» եզրույթը[2]: Գեղագիտական աշխարհագրություն ասելով Գետները հասկանում էր ընդհանուր աշխարհագրության մի նորգիտական ուղղություն, որը գնահատում էր բնության երևույթների գեղեցկությունը կամ տալիս է դրա գեղագիտական արժեքը:

1960-ական թվականներից սկսած, լանդշաֆտների գեղագիտական գնահատումը մեծ զարգացում է ապրել ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Գիտական այս ուղության զարգացմանը զուգահեռ, հատկապես ԱՄՆ-ում ձևավորվում էր այսպես կոչված «վարքագծային աշխարհագրությունը» (Behavioral geography), որի հիմնական

բաժիններից մեկը հանդիսանում է ընկալման աշխարհագրությունը (Perseption geograohy): Այս բնագավառում աշխատող գիտնականները փորձում էին բազմակողմանիորեն ուսումնասիրել մարդկանց կողմից ընկալվող շրջակա աշխարհագրական միջավայրը: Ընկալման աշխարհագրության հիմնադիրներից մեկը՝ Խ.Կ. Բրուկֆիլդը գործածության մեջ դրեց «ընկալման միջավայր» եզրույթը, որը հանդիսանում է արտաքին գործոնների միագումարը: Վերջինս ձևավորում է մարդկանց տարբեր խմբերի կարծրատիպային մտածելակերպը, ինչպես նաև կարծրատիպային ընկալումը:

Ժամանակի ընթացքում որոշ գիտնականներ սկսեցին հետազոտել նաև ընկալման էթնիկ-մշակութային առանձնահատկությունը՝ տարբեր մշակույթներում այս կամ այն լանդշաֆտի նկատմամբ ունեցած հետաքրքրություններից ելնելով: Արդյունքում ստեղծվեց «ազգային լանդշաֆտ» (national landscape), «հայրենի հող» (homeland) և մի շարք այլ հասկացություններ:

Ըստ մեկ այլ հետազոտողի՝ գեղագիտական լանդշաֆտ ասելով անհրաժեշտ է հասկանալ «շրջակա միջավայրի գեղեցկությունը և դրա գրավչության ընկալումը մարդու կողմից, վերջինս ունի կարևոր նշանակություն ռեկրեացիայի և հոգեկան առողջության վերականգնման համար» [3]:

Այս առումով կարևոր է նաև գեղագիտական հատկությունների ռեսուրսային գնահատումը: Ըստ Կ.Ի. Էրինգիսի և Ա.-Ռ. Ա. Բուդրյունասի, բնության գեղագիտական ռեսուրսները ամբողջ շրջակա միջավայրն է, որն առաջացնում է հետաքրքրություն մարդու մոտ [4]: Կարելի է ասել, որ լանդշաֆտի գեղագիտական հատկությունը վերածվում է ռեսուրսի, երբ մարդը սկսում է դա օգտագործել կոնկրետ նպատակների համար (ռեկրեացիա, զբոսաշրջություն և այլն): Որպես ռեսուրս հանդես եկող բնապատկերը մարդու մոտ առաջացնում է դրական էմոցիա (զգացմունք): Ինչքան ուժեղ է բնապատկերի թողած ազդեցությունը, այնքան մեծ է նրա ռեսուրսային արժեքը:

Պետք է նշել, որ լանդշաֆտի գեղագիտական գրավչությունը գնահատվում է հիմնականում հիմնվելով տեսողական ընկալման վրա, որի հիմքում ընկած է այն բնանկարը, որը ձևավորվում է տվյալ տարածքի բնատարածքային համալիրի ամբողջության արդյունքում: Այդ իսկ պատճառով լանդշաֆտը ընկալման և գեղագիտական տեսանկյունից դիտվում է որպես բնապատկեր՝ երևացող տարածություն, տեսանելի և շոշափելի պատկեր: Բնապատկերը կամ տեսողական

նկարը, որը բացվում է հետազոտողի առաջ աշխարհագրական ցանկացած տարածությունից, կարող է գնահատվել գեղեցկության և ներդաշնակության տեսանկյունից:

Ներկայումս լանդշաֆտների գեղագիտական գնահատումը կարևորվում է ևս մեկ ասպեկտով: Ժամանակակից աշխարհում մարդկանց մոտ խնդիրներ են առաջանում առողջության հետ կապված: Շատ մարդկանց մոտ նկատվում է հոգնածություն և ընկճախտ, որոնցից ազատվելու համար օգտագործվում է այսպես կոչված «լանդշաֆտային բուժումը» (բուժում բնության գեղեցկությամբ): Սա խոսում է նաև լանդշաֆտների բուժական հատկության մասին: Նկատի ունենալով ասվածը, շատ գիտնականներ [5; 6]: Օբյեկտիվորեն լանդշաֆտները իրարից տարբերվում են միատեսակ կամ բազմատեսակ բնապատկերներով: Բնապատկերներից ստացված տպավորությունների հանրագումարը ստեղծում է լանդշաֆտների կամ բնապատկերների տեսողական կերպար:

Բնապատկերային արտահայտչականություն հասկացության տակ ուսումնասիրողները հասկանում են որոշակի լանդշաֆտային տարածության սահմաններում ստեղծված միատեսակությունը կամ արտահայտված բազմատեսակությունը:

Տարածաշրջանային մակարդակում լանդշաֆտի գնահատումը հնարավորություն է տալիս առանձին բնապատկերների գնահատումից անցնել լանդշաֆտի ընդհանուր գնահատմանը: Պետք է ասել, որ գնահատման ենթակա է ոչ թե առանձին բնապատկերը, որը տեսանելի է որոշակի կետից, այլ լանդշաֆտային միջավայրը՝ ներառյալ տարատեսակ բնապատկերներ ձևավորելու հնարավորություններով:

Բնապատկերային արտահայտչականության և գեղագիտական ներուժի գնահատումը կատարվում է տարատեսակ լանդշաֆտների բնութագրի հիման վրա: Բնապատկերային արտահայտչականության գնահատումը ձևավորում է առանձին բնապատկերների բնութագրիչների մասնագիտական գնահատման վրա: Բոլոր ցուցանիշները գնահատվում են 2-4 աստիճանային և 0-3 բալային համակարգով:

Ըստ կազմված գնահատման աղյուսակի կատարվել է բնապատկերների գնահատում 4 հիմնական չափորոշիչներով: Առաջին չափորոշիչին են վերաբերվում այն ցուցիչները, որոնք բնութագրվում են լանդշաֆտների տեսողական կամ վիզուալ ընկալումը, որը սուբյեկտիվ գործոն է: Գնահատման ենթարկվում են հիմնական

ցուցիչները՝ գերակայության առկայությունը, բազմաշերտությունը, գունագեղությունը և բնականությունը:

Երկրորդ չափանիշը, մեր կողմից ընդունվել է լանդշաֆտների կառուցվածքային առանձնահատկությունների գնահատումը ըստ ռելիեֆի արտահայտչականության (ռելիեֆի մասնատվածության աստիճանը, լանջերի դիրքադրությունը և այլն), ջրային տարածքների առկայության (ջրային օբյեկտների տեղաբաշխման առանձնահատկությունն ու բնութագիրը), ըստ բնության պահպանության օբյեկտների (բնապահպանական օբյեկտների առկայությունն ու տարատեսակությունը): Պետք է ասել, որ հենց այս ոլորտն է իր բաղադրիչներով բնութագրում բնապատկերների գեղագիտական գնահատումը:

Երրորդ չափորոշիչով գնահատվում են մարդածին պատմաճարտարապետական գործոնները և գեղագիտական նշանակությունը:

Չորրորդ չափորոշիչը տեղամասի ռեկրեացիոն պիտանելիության գնահատումն է: Այն գնահատվել է երկու գործոնով, տեղամասի պիտանելիությունը հանգստի համար՝ հասանելիության տեսանկյունից և տվյալ լանդշաֆտում ռեկրեացիայի առկայությունը:

Ստորև ներկայացված է գնահատման աղյուսակից մի հատված:

Վերևում ներկայացված մեթոդիկայից բացի, որի հիմքում ընկած է լուսանկարների գնահատումը ըստ որոշակի ցուցանիշների, մեր կողմից ուսումնասիրվել է լանդշաֆտների գեղագիտական գնահատման ևս մեկ ուղղություն: Վերջինիս հիմքում ընկած է մաթեմատիկական հաշվարկը, որի համար այս մեթոդին կարելի է անվանել «հաշվարկային»:

Լանդշաֆտների գեղագիտական հաշվարկային մեթոդի կիրառման ժամանակ որպես ցուցանիշ կարելի է ընտրել. ռելիեֆը, բուսածածկույթը և ջրերը: Նշված ցուցանիշները կարելի է գնահատել բառաստիճան սանդղակով (0-3 բալ): Բնական համալիրների գեղագիտական արժեքը ռեկրեացիայի տեսանկյունից առավել սպառիչ բնութագրելու համար, բացի նշված ցուցանիշներից, գնահատման համակարգում կարելի է ներառել է նաև գնահատվող համալիրի ռեկրեացիոն պիտանելիությունը: Վերջինիս դեպքում նպատակահարմար է երկաստիճան սանդղակը:

Բնապատկերային արտահայտչականության գործոնները		Գնահատման սանդղակ	Բալ
Բնապատկերից ընդհանուր տպավորությունը	Գերակայության առկայություն	Առկա է	1
		Առկա չէ	0
	Բազմաշերտություն	1 պլան	1
		2-3 պլան	2
		3 պլանից ավել	3
	Գունագեղություն	Արտահայտիչ չէ	0
		Փոփոխական	1
		Հաճախ փոփոխվող	2
	Բնականություն	Փոփոխված	0
		Չափավոր փոփոխված	1
		Չփոփոխված	2
Ռելիեֆի արտահայտչականությունը	Ռելիեֆի բնութագիրը	Հարթ տեղամաս	0
		Միջին մասնատվածության	1
		Խիստ մասնատվածության	2
	Լանջերի բնութագիրը	Ուռուցիկ	0
		Բարդ	1
		Ուղիղ	2
	Լանջերի դիրքադրությունը	50% և ավել, N, N-O, N-W	1
		50% ավել, S, S-O, S-W	2
Ջրային տարածքների առկայությունը	Ջրային օբյեկտների տեղաբաշխումը:	Փոքր գետեր և լճեր	1
		Խոշոր գետահովիտներ	2
		Խոշոր լճեր	3
Բուսական բազմազանությունը	Տեղամասի տիպը	Փակ տեղամաս, բուս. 60%	0
		Բաց տեղամաս, բուս 60%	1
		Գերբաց և կիսաբաց 20-60%	2
	Տեղաբաշխման բնութագիրը	Հատուկ նշանակ. տնկիներ	0
		Պուրակներ և անտառակներ	1
		Փոքր անտառային զանգվածներ	2
ԲՀՊՏ-ներ	ԲՀՊՏ-ների առկայությունը և տարատեսակները	Բացակայում է	0
		Միատեսակ է	1
		Բազմատեսակ է	2
Մարդածին ազդեցությունը	Փոփոխության տիպն ու մակարդակը	Պայմանական փոփոխված	1
		Թույլ փոփոխված	2
		Ռացիոնալ վերափոխված	3
	Պատմամշակութային օբյեկտների առկայությունը	Առկա չէ	0
		Առկա է	1
Տարածքի օգտագործումը ռեկրեացիոն նպատակով:	Հանգստի համար տեղամասի պիտանելիությունը	Անհարմարավետ	0
		Հարմարավետ	1
	Ռեկրեացիոն տարածքների առկայությունը	Հանգստի ժամանակավոր գոտի	1
		Հանգստի ստացիոնար գոտի	2
Միավորների անրագումար			46

Աղյուսակ 1 Լանդշաֆտների գեղագիտական գնահատման չափանիշները:

Քարտեզագրական աշխատանքերի համար նպատակահարմար է եղել օգտագործել 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզ, որի վրա առանձնացվել են հետազոտվող տարածքի գնահատման միավորները (բնական համալիրները): Որպես հիմք, վերցվել է ռելիեֆի մասնատվածության ցուցանիշը, այնուհետև առանձնացվել են գնահատման հիմնական միավորները: Յուրաքանչյուր բնական համալիրի համար հաշվարկվել է դրանց զբաղեցրած մակերեսը: Այս նպատակով աշխատանքային քարտեզները թվայնացվել են, իսկ մակերեսների և գծագրական որոշ աշխատանքների համար օգտագործվել է AutoCAD 12 ծրագիրը: Այնուհետև հաշվարկվել է առանձնացված միավորի տարածքի տոկոսային չափն ամբողջ տարածաշրջանից հետևյալ բանաձևով.

$$P_i = S_i / S \ (\%)$$

որտեղ, i-ԲՀ-ներից մեկն է, S_i-ն նրա մակերեսը, S- տարածաշրջանի մակերեսը, P_i- տվյալ ԲՀ-ի մակերեսի մասնաբաժինը տարածաշրջանում:

Էսթետիկական գնահատման առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու համար մեր կողմից, հաշվարկվել է նաև էսթետիկական արժեքի տեսակարար գործակիցը, որը ցույց է տալիս, թե բնապատկերային յուրաքանչյուր համալիրի էսթետիկական արժեքը քանի անգամ է ավել գնահատվող ամբողջ տարածքի նույն ցուցանիշից: Վերջինս կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$r_i = L_i / P_i$$

որտեղ r-ը էսթետիկական արժեքի տեսակարար գործակիցն է:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կատարված հետազոտությունների հիման վրա պատրաստվել է մեկ գիտական հոդված, որը ներկայացվելու է ԵՊՀ գիտական տեղեկագրին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Гумбольдт А. Картины природы / Пер. с нем. Т. И. Коншиной под ред. С. В. Обручева. М.: Географгиз, 1959
2. Гетнер А. География, её история, сущность и методы. /Пер. с нем. Е. А. Торнеус. Под ред. Н. Баранского. М-Л, 1930.
3. Хрусталев Ю.П. Эколого-географический словарь, Батайск, 2000. – 198 с.
4. Эрингис К.И., Будрюнас А.-Р. А.Сущность и методика детального эколого-эстетического исследования пейзажей. В кн. «Экология и эстетика ландшафта», изд. «Минтис», Вильнюс, 1975.- 237с.
5. Кочуров Б.И., Бучацкая Н.В. Оценка эстетического потенциала ландшафтов, Юг России: экология, развитие. № 4, 25-34.
6. Дирин Д.А., Попов Е.С., Оценка пейзажно-эстетической привлекательности ландшафтов: методологический обзор, Изв. Алтайского гос. Университета, № 3-2 2010,120-124.
7. Մարտիրոսյան Լ.Մ. Սևանա լճի ավազանի լանդշաֆտների էսթետիկական գնահատումը և քարտեզագրումը՝ ռեկրեացիայի զարգացումը նպատակով:

   ԵՊՀ Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, № 2, 2014թ.

8.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

հ/հ	Անվանումը	Ֆինանսավորման ծավալը (ՀՀ դրամ)
1	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը	900 000
2	Այլ ծախսեր, այդ թվում՝	-
	սարքեր և նյութեր	-
	գործուղումներ	-
Ընդամենը՝		900 000

Թեմայի ղեկավար՝ _____ Մարտիրոսյան Լ. Մ.
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

ՇՊՀ գլխավոր հաշվապահ՝ _____ Ռաֆֆի Քալաջյան
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

«10» հունիսի 2018 թ.

ԹԵՄԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Աշխատանքի վարձատրության հոդվածով 900 000 ՀՀ դրամը՝ ներառյալ եկամտային հարկը, ստացվել են թեմայում ընդգրկված աշխատակիցների կողմից՝ ըստ իրենց հաստիքային աշխատավարձերի:
2. Սարքեր և նյութեր՝ 0 դրամ:
3. Գործուղումներ՝ 0 դրամ:

Թեմայի ղեկավար՝ _____
ստորագրություն

«10» հունիսի 2018 թ.